«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում*

Առարկան՝ *Դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Սուսաննա Հակոբյան*

Ուսումնական հաստատություն՝ *Բաղրամյանի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Սուսաննա Հակոբյան
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Բաղրամյանի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	077-88-49-66
Էլ. հասցե	susan.hakob@mail.ru
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Դասվար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ.....7

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳՈՒՄ.....10

ԳԼՈՒԽ 3

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի շուրջ՝ հայրենիք։

ՑԻՑԵՐՈՆ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նոր արարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի :

Թեմայի արդիականությունը՝ առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ կանգ ենք առել երեխաների ուսումնառության ընթացքում արժեքային համակարգի ձևավորման վրա: Այս հարցին հարկավոր է անդրադառնալ յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի և հստակ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը:

Հետազոտության խնդիրները՝

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2.վերլուծել դասապրոցեսը ,
3.սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները
4.սերտորեն համագործակցել գործընկերների հետ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն անդրադառնալիս նպատակային ենք համարում նախ խոսել մանկավարժական մշակույթի, դրա ձևավորման և կիրառման մասին՝ գտնելով, որ ուսուցիչը նախ ինքը պետք է լինի այդ արժեքային համակարգի կրողը: Մանկավարժական մշակույթի խնդրի հետազոտության սկիզբը կարելի է համարել 20–րդ դարի 70–80–ական թվականները, երբ մանկավարժական մշակույթը սկսեց դիտարկվել որպես մշակույթի դրսևորում և հասարակության հոգևոր գործունեության որոշակի արտահայտություն: Ընդհանուր մշակույթը և մասնագիտական մշակույթը դիտարկվում են փոխադարձ կապի մեջ և փոխպայմանավորված են միմյանցով: Ուսուցչի մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա և ունի իմացական– ճանաչողական, տեղեկատվական, հաղորդակցական գործառույթներ: Կրթության անձնակողմնորոշիչ հայեցակարգի ձևավորման արդյունքում սկսեցին ուսումնասիրվել մանկավարժական մշակույթի առանձին կողմեր՝ բարոյաէթիկական, հաղորդակցական: Ներկայումս «մանկավարժական մշակույթ» հասկացությունը ներառում է և՛ հոգեբանամանկավարժական գիտելիքները, և՛ մանկավարժի էթիկան, տակտը, մանկավարժական տեխնիկան, խոսքի մշակույթը, մեթոդական վարպետությունը, անձնային հատկանիշները: Այս մոտեցումը մեծ մասամբ պայմանավորված է նրանով, որ «մանկավարժ» հասկացությունը բովանդակում է մասնագիտությունը, սոցիալական դերը, գործունեության ձևը, անձի ուղղվածությունը: Մանկավարժական մշակույթը ուսուցման և դաստիարակության գործընթացում դրսևորվում է որպես ամբողջական համալիր՝ ներառելով ոչ միայն ընդհանուր գծեր, այլև յուրաքանչյուր դասավանդողի անձնային հատկանիշները: Մանկավարժական մշակույթի տիրապետման գործընթացը բազմաշերտ և երկարատև գործընթաց է, որը պահանջում է անընդհատ ինքնակատարելագործում, ինքնակրթություն և ինքնազարգացում: Մանկավարժական մշակույթը մանկավարժական գործընթացի պայմաններում ընդհանուր մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Վ. Ա. Բարաբանշչիկովը մանկավարժական մշակույթի հիմն ական բաղադրատարրեր է դիտարկում հոգեբանամանկավարժական գիտելիքների իմացությունը, բարոյական անբասիր կերտվածքի, մտավոր և հուզական հատկանիշների ներդաշնակ զուգակցումը, գիտական, մանկավարժական, հետազոտական ունակությունների համատեղումը, մեթոդամասնագիտական հմտությունները, անընդհատ ինքնակատարելագործումն ու պահանջկոտությունը իր գիտելիքների նկատմամբ[1]: Մի շարք հետազոտողներ, ելնելով այսօրվա իրականությունից, որում առկա են կրթության մարդասիրացման կայուն միտումներ,

[1]А. В.Барабанщиков, Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1, с. 73.

փորձ են անում տալ 21–րդ դարի ուսուցչի լիարժեք նկարագիրը: Վ. Ի. Անդրեևը ներկայացնում է երրորդ հազարամյակի ուսուցչի անձի մոդելը, որին հատկանշական են՝

• կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական

ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,

• հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,

• ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում, մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,

• ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,

• մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ համագործակցելու ձգտումը,

• քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,

• մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը, հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,

• հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում[1] : 21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը,

մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար: Մանկավարժական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը միավորում է մանկավարժական պատմամշակութային փորձը և կարգավորում է մանկավարժական փոխներգործության ոլորտը: Մենք լիովին համաձայն ենք այն դիտարկմանը, որ մանկավարժական մշակույթի մակարդակը փոխադարձաբար կապված է կրթադաստիարակչական գործընթացի մակարդակի հետ: Բայց և այնպես, մեր կարծիքով, այդ անընդհատ գործընթացի մեջ է ամփոփված մշակույթի էությունը. մարդը (տվյալ դեպքում՝ ուսուցիչը) կախված է հասարակության ընդհանուր մշակույթի զարգացումից, բայց և հասարակության մշակույթի զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի անհատական մշակույթից: Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք, հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը: Ապագա ուսուցիչների մանկավարժական–մասնագիտական մշակույթին , արժեքային համակրգին նվիրված հետազոտություններում (Օ. Ա. Շկիլյովա, Ա. Է. Կորոբովա, Մ. Վ. Նիկոլանա և այլք) մանկավարժական մշակույթը դիտարկվում է որպես մանկավարժի մասնագիտության կարևոր հատկանիշ, ուսուցչի կողմից մարդկության մանկավարժական փորձի տիրապետման որոշակի աստիճան, մանկավարժական արժեքների անընդհատ զարգացող համակարգ, ուսուցչի գործունեության միջոց և վարքի արտահայտություն[1]:

[1] Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2, с. 55.

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[1]: Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության,

[1] Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,

երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ: Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները: Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական

քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն: Հետազոտության ընթացքում պետք է որոնել նոր տվյալների, երևույթների փաստարկված բացատրություն, համալրել և ճշտել առկա տեսակետները, չվախենալ գիտական համարձակության դրսևորելուց: Հետազոտողի վարպետությունը այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար, չդրսևորելով սուբյեկտիվություն, սրա հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է: Մանկավարժական հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժական գործընթացների ու երևույթների համակողմանի ուսումնասիրությունից:
Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.

1. ստեղծել ենք բարյացակամ միջավայր,
2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,

3. ընտանիքներին ընձեռել ենք մեզ հետ համագործակցելու հնարավորություն,

4. առաջնորդվել ենք մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,

5. աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը

6. Համատեղ դասավանդում սկսել ենք փոքր քայլերից. նախ վերցրել ենք մեկ առարկա՝ հայոց լեզու , հետո աստիճանաբար , սովորողների համար աննկատ կերպով նաև համատեղել մնացած առարկաները դասավանդող ուսուցիչների ջանքերը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳՈՒՄ

Հայ ժողովրդական բանահյուսության հնամենի գանձերին անդրադառնալիս տեսնում ենք նրա ամենամեծ արժեքը՝ «Սասնա ծռեր» վիպերգը, որի իր ճյուղերից մեկի անունով հայտնի է որպես «Սասունցի Դավիթ էպոս »։ Այս վիպերգի փառքը ավելի է տարածվում աշխարհով մեկ և արժանանում է միջազգային ճանաչման ու գնահատանքի։

Էպոսն իր հիմնական բովանդակությամբ արտացոլում է Հայաստանում մոտ 250 տարի տևած արաբական լուծը։ Էպոսի ընդգրկված ժամանակահատվածը VII-X դարերն են։ Սակայն էպոսի պատումների ստեղծումը կապվում է ավելի ուշ ժամանակների հետ[1]։ Վիպերգի հիմքում ընկած են բազմաքանակ ապստամբություններ, որոնք հայերը մղել են արաբական խալիֆաթի նվաճողական քաղաքականության դեմ։ Ապստամբություններից մեկը մեզ է հասել խութեցիների ապստամբություն անունով։ Խութեցիների ըմբոստացումը տեղի է ունեցել 851 թվականին Հովհանի գլխավորությամբ։ Խութեցիները հաղթել են արաբներին և սպանել Յուսոֆ (Հովսեփ) ոստիկանապետին։ Այդ մասին մանրամասն պատմում է Թովմա Արծրունին իր «Պատմություն Արծրյունյաց տան» մատյանում ։

Էպոսի առաջին գրառողը, որը նաև հայ էպոսագիտության հիմնադիրն է, Գարեգին Սրվանձտյանցը մեր ազգային վիպերգի առաջին ճյուղը կապում է նախաքրիստոնեական ժամանակների հետ։ Ասորեստանի Սենեքերիմ թագավորը իր Ադրամելիք և Սանասար որդիներին պետք է զոհ մատուցեր կուռքերին, սրանք էլ սպանեցին իրենց հորը և փախան եկան Սասուն։ Էպոսի մեջ այս դեպքերը դարերի հեռավոր արձագանքով հասել են մինչր XIX դարի վերջը և XX դարի սկիզբը՝ մինչև էպոսի գրառումները։

Էպոսն առաջին անգամ գրառել է հայ բանագիտության մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը։ Նա լսել էր մեր ազգային վիպերգի գոյության մասին և երեք տարի եռանդագին որոնում էր , մինչև գտավ առաջին ասացողին՝ Մշո դաշտի Առնիստ գյուղի բնակիչ Կրպոյին , որին խնամել է,, խրախուսել, և վերջինս պատմել՝ մեր վիպերգը՝ խոստովանելով , թե իր պատմածը թերի է, իր վարպետը ավելի երկար էր պատմում, և նրա ասքը շատ տեղերում ընդհատվում էր երգերով։

Գարեգին Սրվանձտյանցը իր գրառած պատումին կցել է բանասիրական բացատրություններ, պատմական ճշգրտումներ, դավանաբանական մեկնություններ, որոնք ընդունվեցին հետագա էպոսագետների կողմից։

---

[1] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978,էջ 86,

Գարեգին Սրվանձտյանցը էպոսին կցված բառաջաբանում ցավով խոսում է նաև իր ժամանակներում նման գործերի նկատմամբ եղած անտարբերության մասին, նա մտավածություն ունի , թե «Գրոց եւ բրոց» գրքույկը ու իր անձը կունենան արհամարհողներ, սակայն իրեն քաջալերված կհամարի, եթե համրանքով գեթ քան հոգի հավանեն իր գործը, և կշարունակի բանագիտական իր գործունեությունը՝ խրախույս կարդալով ուրիշներին, որ հետևել իրեն, աշխատասիրություն ձեռք բերեն և հրատարակեն նման գրվածքներ։

Հաղթեց բանագետի համառ կամքը, և նրա լուսավոր ճանապարհով ընթացան նոր բանահավաքներ և էպոսագետներ։ Դրնցից են Մանուկ Աբեղյանը, Երվանդ Լալայանը, Սարգիս Հայկունին, Կարո Մելիք-Օհանջանյանը, Սարգիս Հարությունյանը և ուրիշներ։

«Սասունցի Դավիթ» էպոսի առաջին գրառումը լույս է տեսել 1874-ին «Գրոց եւ Բրոց, Սասունցի Դաւիթ և Միեր» խորագրով։

1930-ական թվականներին հայ էպոսագիտությունը մտնում է իր զարգացման նոր փուլը։ Էպոսագետներ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի ջանքերով մինչ այդ հրատարակված 47 տարբերակները ամփոփվում են երեք ստվարածավալ հատորների մեջ և հրատարակվում 1936,1944,1951 թվականներին։

1939 թվականին հրատարակվում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը(կազմողներ՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան), և Խորհրդային Միության մեջ մեծ հանդիսավորությամբ նշվում է հայ ժողովրդական հերոսական էպոսի 1000-ամյա հոբելյանը։ Համահավաք բնագրի առաջաբանը գրել է նշանավոր հայագետ Հովսեփ Օրբելին։

«Սասնա ծռեր» վիպերգն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ազգային երազանքները։ Էպոսը՝ որպես գրական տեսակ, աչքի է ընկնում իր խոր պատմականությամբ և շեշտված ազգային բովանդակությամբ։ Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձնագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին։ Մեր էպոսը խորապես ազգային է , նրանում երևում են մեր ազգային բնավորության հիմնական գծերը։

Մեր էպոսը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ։ Հայրենասիրության առաջին օրինակը ցուցադրում էէպոսի դյուցազունների մայրը՝ Ծովինարը, որը Հայոց Գագիկ թագավորի դուստրն է։

Արաբական խալիֆը հարկի դիմաց պահանջում է Ծովինարին։ Գագիկ թագավորը սարսափում է այդ մտքից, որովհետև արաբական խալիֆը քրիստոնյա չէր։ Սկսում են քննարկել տարակարծությունները, որովհետև մերժման դեպքում խալիֆը սպառնում է ավերել Հայոց աշխարհը։ Իր հորը ծանր կացությունից փրկում է

Ծովինարը. նա բացատրում է իր անձնազոհության կարևորությունը և համոզում է հորը.

- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
  Զամեն տի սպանի իմ պատճառով,
  Աղեկն էն է, ես էրթամ,
  Ուրիշ մարդու թող բան չլընի։

Հայրենասիրական այս արմատից են ծնվում Սասնա դյուցազունները և իրենց գործերով ապացուցել ե անսահման նվիրվածությունը հայրենի հողի և նրա սրբությունների նկատմամբ։ Էպոսի բոլոր ճյուղերի հանգուցակետը երրորդն է՝ Սասունցի Դավթի ճյուղը, և, իհարկե, ամենահայրենասիրականը։ Դավթին հաջողվում է ոչ միայն ազատել հարկերից Սասունը՝ Հայաստանը, այլև դուրս քաշել օտար զավթիչներին իր հողից։

Մեր ազգային վիպերգը փառաբանում է աշխատանքը, աշխատավոր մարդուն։ Էպոսի գլխավոր հերոսները միշտ օգնում են գյուղացիներին, բոլոր խեղճ մարդկանց։ Իրենց բերդը կառուցելուց առաջ Սանասարը և Բաղդասարը նախ տներ են կառուցում հասարակ մարդկանց համար.

- Առաջ շինենք զէդոնց տներ,
  Ու նոր շինենք զմեր բերդ.

Իրենց կառուցած հզոր բերդի անունն էլ Սանասարը և Բաղդասարը դնում են ըս մի ծեր պապիկի բնորոշման՝ Սասուն։ Սանասարն ու Բաղդասարը Հայոց Գագիկ թագավորի թոռներն էին, սակայն իրենց վարքագծով նարնք տարբերակում չեն դնում տոհմիկ արքայազնի և հասարակ ու պարզ մարդկանց միջև, շարունակ մտածում են ուրիշների մասին, պարգևում նրանց իրենց հոգատարությունն ու ջերմությունը։

«Սասնա ծռեր» վիպերգում դյուցազունները պայքարում են ոչ միայն արտաքին նվաճողների դեմ, այլև հանուն երկրի ներքին կյանքի արդարության։ Նրանք չեն հանդուրժում գերհարուստ վիշապներին և դևերին, խլում են հարստությունը նրանցից և հալալ ձևով բաժանում հողի աշխատավորներին։

Երկրորդ ճյուղի գլխավոր հերոսը՝ Մհերը, իր քաջագործությունը կատարում է հանուն իրբերկրիրժողովրդի։ Նա սպանում է Սասուն եկող հացի ժանապարհը փակող առյուծին և կոչվում է Առյուծաձև Մհեր, այսինքն՝ առյուծ պատռող Մհեր։

Մեր էպոսում կա մի խորհրդանշական իմաստ պարունակող դրվագ։ Դավիթը վերաշինում է իր հոր Մարութա վանքը, սակայն վանքի կառույցը շարունակ քանդվում է։ Գիշերը երազում Դավթին երևում է Աստվածածինը և պատվիրում վանքի պատի մեջ դնել Դավթի սուրը։ Այդպես էլ անում են, և վանքը մնում է կանգուն։ Վիպերգի այս դրվագում իմաստավորված է հայ ժողովրդի դարավոր կենսափորձը. ամեն երկրի ստեղծագործ աշխատանքը ապահովելու համար պետք է ունենալ ռազմական, ինքնապաշտպանական խիզախություն։ Այս խորիմաստ բանաձևը կա

տարբեր ժողովուրդների բանահյուսություններում։ Հանճարեղ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը այդ իմաստությունը պատկերել է իր ֆիլմերից մեկում՝ Սուրամի ամրոցի շինությունը նկարելիս.պատը կանգուն է մնում , երբ նրա մեջ կենդանի-կենդանի շարում են երիտասարդ մարդուն։ Սա, իհարկե, խորհրդանիշ է, և որպես այդպիսին՝ անձնազոհության մարմնացում է ներկայացնում, խորհրդանիշի բացատրությունը ավելի քան պարզ է և իմաստալից. ոչ մի մեծ նախաձեռնություն չի կարող իրականանալ առանց թանկ զոհողությունների։

Մեր էպոսում կա երկրագնդի բոլոր մարդկանց ուղղված մի պատգամ, այն է, ՝ սիրիր քո հայրենիքը , բայց հանդուրժիր, որ օտարն էլ իր երկիրը սիրի, մի թող օտարին, որ նվաճի քո հողը, լուծ դնի քո վրա, սակայն նույնը դու երբեք մի արա, սիրիր օտարին հարևանությամբ, բարի դրացիության ազնիվ սկզբունքով[1]։ Այս առումով «Սասնա ծռերը» իր պատգամներով բացառիկ է աշխարհի վիպերգերի մեջ։ Մարդասիրական այս պատգամները էպոսում հղվում են արաբ ծերունու և Սասունցի Դավթի փոխհարաբերությունների միջոցով։

Էպոսում հայ ժողովուրդն իր ազգային բնավորության գծերը մարմնավորել է Սասունցի Դավթի կերպարում։ Բոլոր ազգերի էխոսների գլխավոր հերոսները հավաքական կերպարներ են, նրանցում խտացած են ամեն մի ազգի բնավորության լավագույն գծերը։

Դավթի կյանքն էպոսում պատկերված է ծննդյան օրից մինչև մահը։ Նա Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն է, ամենատեսանելին, ամենագեղեցիկը։ Դավթի մանկությունն իր մանրամասներով շատ հետաքրքիր է։ Ծնված պահից որբացած Դավիթն իր մանկությունն անց է կացնում օտարության մեջ ՝ Մըսրում։ Նա, սակայն, սնվում է Սասունից բերված յուղով ու մեղրով։ Դավիթը հրաշապատում հեքիաթի հսկայի մնան արագ մեծանում է, հզորանում, սակայն միաժամանակ նա իսկականն միամիտ երեխա է, որին դեռևս անծանոթ են կյանքի մեծ ու մանր նենգությունները։ Ուժի կողքին Դավիթն ունի մի կարևոր բնավորության գիծ՝ ազատատենչ է, բռնակալին ենթարկվել չգիտի, նա չի անցնում Մսրա Մելիքի թրի տակով.

Դավիթ չը գնաց, չանցավ թրի տակով,

Կշտով անցավ.

Ճկութ քսվավ ի ջարդու քար՝

Քարեն կրակ էլավ։

---

[1] Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր- Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 111,

Ժողովուրդը Դավթի մեջ շեշտել է նրա բացառիկ առաքինությունները։ Դավիթն անգամ Մսրա Մելիքի նենգությունից, իրեն փոսը գցելուց հետո էլ մնում է մեծահոգի և իր առաջին զարկերը զիջում է Մսրա Մելիքի մորն ու քրոջը՝ հիշելով մանկության օրերին նրանց խնամքը իր նկատմամբ։
Դավիթը սիրված անձնավորություն է, որովհետև ինքն էլ սիրում է իր հայրենակիցներին, մարդկանց։ Նա գիտի հարգել մեծերին. ուշադիր լսում է արաբ ծերունու , արտատեր պառավի խորհուրդները։

Էպոսն ունի դաստիարակչական նպատակներ. այն ուզում է իր ազնվագույն երազանքներով շտկել կյանքի ստվերոտ կողմերը, տարբեր ժողովուրդների միջև հաստատել բարիդրացիություն։

Էպոսի հարստությունից են կին հերոսների կերպարները։ Ծովինարը՝ առաջինն այդ կերպարների մեջ, հանդես է գալիս հայրենի սրբությունների նկատմամբ իր շեշտված վերաբերմունքով։ Արտասովոր կանայք են Արմաղանը, Խանդութը, Գոհարը։ Կին հերոսներից ուշագրավ է արտատեր պառավը, որն իր մեջ ամփոփում է հայ կնոջ դարավոր իմաստությունը։ Նա ժողովրդի մշտարթուն ոգու կրողն է, իր ազգային հերոսին ոգևորող ժողովրդի մարդը[1]։ Այսպիսի կանանց համար ազգային հերոսը վեր է ամեն ինչից , նրանք ազգային հերոսներ արարողներն են՝ բոլոր ժամանակների համար։

Մեր ազգային հերոսներն ունեն ընդհանուր գծեր, սակայն նրանք խորապես անհատականացված կերպարներ են։ Երբեք չի կարելի շփոթել Սանասարին Մեծ Միհերի, Դավթի և Փոքր Միհերի հետ։ Նույն կերպ անհատականացված են նաև կին հերոսները։

«Սասունցի Դավիթ» էպոսը մեկնաբանելիս Հ.Օրբելին «Նախաբանում» համառոտ ներկայացնում է այն երազանքները, որոնք հայ ժողովուրդը դրել է ազգային էպոսում։ Էպոսի դյուցազունները մերժում են նվաճողական պատերազմ հրահրողներին և նրանց ողջ պայքարը հենց նման զավթիչների դեմ է, էպոսի գլխավոր հերոսը «ջերմ ու անաղարտ սիրտ ունի», օգնում է բոլոր անպաշտպան մարդկանց ու սխրագործություններ է կատարում հանուն իր հայրենիքի ու ժողովրդի բարօրության[1]։
Քանի որ տարրական դասարաններում էպոսի հերոսներից միայն Դավթին են ծանոթ , մենք չենք անդրադառնա մանրամասնորեն մնացած կերպարներին և կանգ կառնենք

---

[1] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1961, էջ 64,

այս կերպարի վրա և հետազոտելով ցույց կտանք, թե ինչպես նրա կերպարի միջոցով սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն և ազգային արժեհամակարգ։

ԳԼՈՒԽ 3

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի բանահյուսության գանձարանում: Այդպիսին է նաև հայ ժողովրդական հերոսական էպոս «Սասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում: Որպես երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդած ուսուցչուհի՝ հավաստում եմ, որ հայ երեխան սիրով է յուրացնում մեր էպոսի խորունկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին: Ամեն ինչ կախված է դասավանդող ուսուցչի վարպետությունից: Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է: Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է 74 բազմաթիվ օգտակար պատգամներ: Ահա թե ինչ է ասում նա «Հաջորդականության ընտրությունը» հոդվածում. «Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»[1]:

Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար. այն ուղեցույց: Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման և նրա մշակումներին համար: Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ: Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844-1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ: Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով[2]:

---

[1] Լ.Շանթ, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Երևան, 2012, էջ 112,

[2]«Ազգային դյուցազնական աշխարհ» (Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ), հորինեց Ս. Մանդինյան, Թիֆլիս, 1881,

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրն անցնում են IX դասարանում[1]։ Սա փաստորեն մեր ազգային էպոսի հետ ծանոթանալու հիմնական յուրացման առաջին ու կարևոր քայլն է, որը ներկայացնում է հայ էպոսագիտության սկզբնավորումը, նրա անցած ճանապարհը, զանազան պատումների գրառումները և դրանց հիման վրա ակադեմիկոս Օրբելու խմբագրությամբ 1939 թվականին համահավաք բնագրի ստեղծումն ու հրապարակումը։ Բնականաբար խոսք է ասվում էպոսի պատմական հիմքի, գաղափարական հարստության, կերպարների համակարգի, բառապաշարի շերտերի ու արվեստի մասին։

IX դասարանը հասուն ու զարգացած աշակերտին մատուցում է առավել գիտական մեկնաբանություններ, որոնց միջոցով վերջինս ծանոթանում է միջնադարյան մտածողությանը խիստ հատուկ խորհրդանիշներին, հասկանում հրաշապատում հեքիաթների ու էպոսի աղերսները։ Բացատրվում են դևերի, վիշապների խորհրդանիշները։ IX դասարանում ուսուցիչը աշակերտներին տանում է դիտելու հանճարեղ քանդակագործ Երվանդ Քոչարի կերտած Սասունցի Դավթի արձանը, որը փառահեղորեն կանգնած է Երևանի կայարանամերձ հրապարակում։ Այն կանգնեցվել է 1959 թվականին ու համարվում է Երևանի տեսարժան վայրերից։ Երվանդ Քոչարի մեջ Սասունցի Դավթի նկատմամբ մեծ հետաքրքրությունն արթնացրել է Ավետիք Իսահակյանը Փարիզում։ Այդ մասին վկայում է Վարպետի որդին՝ Վիգեն Իսահակյանն իր հուշերում. «Երվանդը հիշեց հորս Փարիզում տված խորհուրդը. «Կարդա «Սասունցի Դավիթը» և միգուցե դու նրա մոտիվներով նոր գործեր արարես», և նոր թափ առած, ոգևորված անցավ գործի։ Երբեմնի զորեղ փարիզյան 1930-32թթ. «մուսան» վերադառնում էր քանդակագործին»[2] Տեղին է նշել. «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական հրատարակության նկարազարդումը ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հանձնարարում է Երվանդ Քոչարին։ Երևանում աշխատող ուսուցիչները պարտավոր են իրենց IX և X դասարաններում սովորող աշակերտներին ցուցադրելու ոչ միայն Սասունցի Դավթի արձանը, այլև նրանց հետ այցելելու Երվանդ Քոչարի թանգարանը, որտեղ ցուցադրված են էպոսի նկարազարդման բնօրինակները։ Սա ներառարկայական և միջառարկայական կապերի կարևոր նախաձեռնություն է, արժեհամակարգի ձևավորում։ Էպոսը կբացատրվի նաև արվեստի լեզվով, տեսողականն առավել կամրապնդի գիտելիքը, կհարստացնի աշակերտի հոգևոր աշխարհը. «Քոչարն իր արվեստով, փաստական ապացույցներով լուսավորեց այս հասարակությանը, ցույց տվեց, որ Հայաստանն ունեցել է մեծ անցյալ, էպոս, պատմություն, կայսրություն, կուլտուրա և արվեստ»[3]։

---

[1]Տե՛ս Դավիթ Գասպարյան, Գրականություն, 9-րդ դասարան, Երևան, 1913, էջ 69-115,

[2] Իսահակյան Վ., Փարիզ, Քոչար, Անցած օրեր..., Երևան, 2006, էջ 241,

[3] նույն տեղում , **էջ 244,**

Հայ ժողովրդական բանահյուսության հյուսվածքներում ակնհայտ է մարդու վաղնջական մտածողության այնպիսի դրսևորումներ, որոնք իրական կյանքի օրինաչափությունները խախտում են, և անհնարինը դարձնում են հնարավոր։ «Սասունցի Դավիթ» էպոսում էլ խախտված են ժամանակի ու տարածության սովորական հասկացությունները։ Քուռկիկ Ջալալին նորածին Դավթին ակնթարթային արագությամբ Սասունից հասցնում է Մսըր, ուր մանուկ Դավիթը մեծանում է արագությամբ։ Կամ՝ իր աղջկա ձեռքով նետահարված Դավիթն այնպիսի ձայն է արձակում, որ բազում մղոններ հեռու լսում է Ջենով Օհանը։ Էպոսի մի քանի հերոսներ կենդանի են բոլոր ճյուղերում և գործուն մասնակցություն ունեն չորս գլխավոր հերոսների կյանքում։ Դրանցից է Քեռի Թորոսը, որն էպոսի առաջին ճյուղում տասնյոթ-տասնութ տարեկան է, գործում է բոլոր ճյուղերում և վախճանվում է էպոսի վերջում՝ «Վերջերգից» առաջ.

Քեռի Թորոս կսկծուց մեռավ,

Որ իմացավ Միհրի փակվել[1]։

Շատ կարևոր է աշակերտին բացատրել, թե «Սասունցի Դավիթ» էպոսում կան բազմաթիվ հնագույն հավատալիքների և հին հասարակարգերի հետքեր։ Ինչպես Հովսեփ Օրբելին է նկատել՝ էպոսը պահպանել է մայրիշխանության որոշակի հետքեր։ «Սասունցի Դավիթ» էպոսի կրոնական հիմնական ուղղվածությունը կապվում է քրիստոնեության հետ։ Սասնա բոլոր դյուցազուններն իրենց թևի վրա ունեն խաչ պատերազմին, որը նրանց թևին իջնում է Աստծու հրամանով ու ամեն անգամ օգնում է Սասնա դյուցազուններին՝ նրանց արդարացի կռվում։

IX դասարանի դասագրքում կան նաև «Սասունցի Դավիթ» էպոսի I, III, IV ճյուղերից կարևոր հատվածներ, որոնք եզրափակվում են «Վերջերգով»։ Նույն գրքում զետեղված են նաև Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի XIV, XV, XVI, XXIV հատվածները։

Մանկավարժական և գրականագիտական առումով համահավաք բնագրի և թումանյանական մշակման հատվածների համադրումը խիստ նպատակային է։ Հովհաննես Թումանյանը շատ մեծ տեղ էր հատկացնում գրականությանը ապագա քաղաքացի դաստիարակելու գործում։ Նրա «Դպրոց և գրականություն» հոդվածում կարդում ենք. «Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»[2]։

---

[1]«Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ 318։

[2] Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 51,

Մեծ գրողը շահագրգիռ էր հայ դպրոցի առաջընթացի խնդիրներում ու երազում էր, որ ամեն հայ աշակերտի հոգում համատեղվեն ազգայինն ու համամարդկայինը: Նա այդ համատեղումը տեսավ «Սասունցի Դավիթ» էպոսում, որը մշակեց հա տուկ երեխաների համար[1] :Աշակերտներին բացատրվում է, թե որքան ներդաշն են հայ հերոսական էպոսի և Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի մարդասիրական ու հայրենասիրական գաղափարները Մեծ բանաստեղծը հայ ազգային էպոսի խաղաղասիրական գաղափարախոսությունը հղում էր աշխարհի բոլոր նվաճողներին՝ մարդկությանը տալով եզակի ու կենսական դաս՝ լինել միմյանց հետ բարեկամ և ոչ թե թշնամի: X դասարանում հայ աշակերտին ուսուցանվում է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը: Նույնիսկ փորձ է արվում «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի նոր, ավելի խորացված յուրացման կողքին ծանոթացնել էպոսի երկու այլ պատումների կամ տարբերակների հետ: Նշվում է «Սասնա ծռեր» էպոսի հանդես գալը Արևմտյան Հայաստանում՝ հատ ապես Սասունի, Տարոնի, Մոկսի և նրանց հարակից գավառներում[2] :

Այս դասարանում աշակերտը դասագրքից յուրացնում է «Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերի գլխավոր դեմքերի՝ Սանասարի ու Բաղդասարի, Մեծ Միհրի, Սասունցի Դավթի և Փոքր Միհրի կերպարների վերլուծական բնութագրերը: Վերլուծելով կերպարները՝ աշակերտը տեսնում է , որ էպոսի հերոսները օժտված են մարդկային բազմապիսի բարձր հատկանիշներով՝ քաջությամբ, ազնվությամբ, բարությամբ, վեհանձնությամբ, պատվասիրությամբ, մարդասիրությամբ ու ազատասիրությամբ: Սանասարի ու Բաղդասարի կառուցած բերդը՝ Սասունը, հայոց տունն է, հայի հայրենիքը, որին ժողովուրդը ցանկանում է տեսնել հզոր ու անկախ: Սանասարի որդին՝ Միհրը, պարզ, բարի ու մանկան պես միամիտ հոգի ունի: Դա Սասնա բոլոր հերոսներին բնորոշ հատկությունն է: Ժողովրդի ամենասիրելի հերոս Դավթի կերպրը վերլուծելիս աշակերտները տեսնում են, որ նրա կերպարի մեջ ժողովուրդը մարմնավորել է իր բոլոր երազանքներն ու ցանկությունները: Դավիթը ժառանգել է պապի և հոր հերոսական բոլոր գծերը: Դավիթը ազնիվ է, շիտակ և վեհանձն: Նա մեծահոգաբար զիջում է Մելիքին առաջին հարվածի իրավունքը, բացի այդ նա իր առաջին երկու զարկերը զիջում է Մելիքի մորն ու քրոջը, քանի որ վերջիններս իրեն պահել ու խնամել են: Դավիթի որդի Փոքր Միհրը, թափառելով երկրեերկիր, փորձում է գտնել արդարություն ու ազատություն: Եթե Դավթի համար գլխավորը իր երկրի ազատության ու անկախության հետապնդումն էր, ապա Միհրին տանջողը աշխարհում գոյություն ունեցող անարդար կարգերն են, որին նա փորձում է դիմագրավել իր հզոր կամքի ուժով: Մարդասեր Միհրը այն փրկիչ-առաքյալն է, որը ազատելու էր աշխարհը չար ոգիներից, դատելու էր անարդար ու մեղավոր

[1] Նույն տեղում, էջ 252.

[2] Վ.Ներսիսյան, Լ.Մնացականյան, Հայ գրականություն, 10, Երևան, 2009, էջ 40,

մարդկանց։ Էպոսի հերոսները խաղաղասեր են և միշտ բարձր են պահում ճշմարտության և պարտաճանաչության իրենց համոզմունքները, մարդկային արժեքները։ Դավիթն օժտված է ազնիվ ու հմայիչ մարդասիրական վաքագծով, վճռական է ու վեհանձն, աչքի է ընկնում իր մարդկային գծերով։ Նրա անկաշառ ու պարզ հոգին մարդասիրության ու ազատասիրության լայն ըմբռնում ունի։ Նա դեռևս մանուկ հասակում չի անցնում խալիֆի թրի տակով, իսկ հետագայում Մսրա Մելիքի հետ հաշվեհարդար տեսնելուց հետո խաղաղությամբ իրենց երկկիրն է վերադարձնում նրա բանակը։ Նա բարի է ու գեղեցիկ, անշահախնդիր է ու զիջող։ Դավիթը վերականգնում է Մարութա Աստվածածին վանքը և չի մոռանում աղոթել իր Աստծուն։ Էպոսի կին հերոսուհիները՝ Ծովինարը, Քառասուն ճյուղ Ծամը, Արմաղանը, Խանդութը և Գոհարը իրենց վարքագծով, իրենց հայրենասիրությամբ մեծ առժեքներ են ձևավորում աշակերտների մեջ։ Առավել ընդարձակ ձևով են մատուցվում էպոսի գաղափարաբանությունը և ներկայացվում էպոսի լեզվառճական առանձնահատկությունները։ Դավթի կերպարն ավելի բնական ձևով ընկալելու համար դասագրքի հեղինակները «Հարցեր և առաջադրանքներ» բաժնում զետեղել են «Մարդկային ի՞նչ թուլություններ ուներ Դավիթը» հարցադրումը։ «Սասունցի Դավիթ» էպոսի չորրորդ ճյուղն առանձնացված մշակել է Ավետիք Իսահակյանը՝ իր այդ երկի վրա աշխատելով երկար տարիներ։ Վարպետը գրում է. «Շատ վաղ ժամանակից սասունցիների էպոսը զբաղեցրել է իմ երևակայությունը։ Հատկապես Միհրի պատկերը գրավել է ինձ իր դեմոկրատական և հեղափոխական տրամադրություններով»[1]։ Իսահակյանը մի առանձին սեր ուներ տարբեր ժողովուրդների էպոսների նկատմամբ։ Նրանց մեջ որոշակիորեն առանձնացնում էր ամեն մի ժողովրդի ազատասիրական ձգտումներն ու ատելությունը դեպի օտար նվաճողները։

Իսահակյանի էպոսի մշակումը ներկա ավագ դպրոցներում այլևս չեն անցնում, սակայն հեղինակին տրվում է տասներկու ժամ և առաջին թեման է՝ «Ավետիք Իսահակյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը»[2] ։ Հենց այս առաջին ժամին ուսուցիչը կարող է կապ հաստատել Գ. Սրվանձտյանցի գրառման, «Սասունցի Դավիթ» պոեմի և Ավ.Իսահակյանի «Սասմա Միհր» երկի միջև։ Ինչպես ապացուցեց հայ ժողովրդի դարավոր պատմության այսօրը, «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարներն արդիական են, և նրանց ուսուցումը արժեհամակարգի ձևավորման համար հայկական դպրոցի տարբեր դասարաններում խիստ պարտադիր է։

1 Ավ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974, էջ 3102 Տե՛ս Ն.Տողանյան, Թ.Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2012, էջ 85,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

2. Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

3. Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:

4. Բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է:

5. Դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, առավելապես՝Գրականության:

6. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:

7. Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Ազգային դյուցազնական աշխարհ» (Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ), հորինեց Ս.

Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005

Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974,

Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր- Ղևոնդյանի, Երևան, 1982,

Ն.Տողանյան, Թ.Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2012,

Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995,

Ներսիսյան Վ., Մնացականյան Լ., Հայ գրականություն, 10, Երևան, 2009,

Շանթ Լ., Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Երևան, 2012, էջ 112

«Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս,

Скаткин М. Н. , Проблемы современной дидактики, 2-е изд.- Москва, 1984

Бабанский Ю. К., Оптимизация уч.- воспитат. процесса. метод. основы, М.,1982,

Барабанщиков А Б, Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1, .

Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,

Ушинский К. Д., Педагогика, М., 2019: